



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 538
Փետրուար 13, 1956

26

Հոգեշնորհ
Տ. Սուքիաս Վրդ. ԳալՏայեան
Նախագահ Միսկան Խորհուրդի
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ռէյսին.

Սիրելի Հայր Սուքիաս,

Ստացած ենք Փետրուար 7, 1956 թուակիր ձեր ծխական տեղեկագիրը, որով կը հաղորդէիք թէ ձեր նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միսկան Խորհուրդի անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերու պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրեւ Եկեղեցւոյդ նախնաձախնդիր, անձնուէր եւ պարտահանաչ անդամներ, կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Տիարժ. Կարապետ Տէտէեան
Միքայէլ Կարուկեան
Երուանդ Միքայէլեան

Կօրհները Միսկան Խորհուրդիդ նորընտիր անդամները եւ լիայոյս ենք որ անոնք եւս իրենց Հանքերը միացնելով ձեր եւ իրենց պաշտօնակիցներու աշխատանքներուն, պիտի գործեն ծուխիդ Հոգեւոր օգտին, Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Մաղթելով ի Տեառնէ կար ու յաջողութիւն.

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի